

# ԱՐԱՐԱՏ ԳՅՈՒԼԲԱՆԳՅԱՆ

## ՈՉԻՆՉԸ

Այս խառնակ անորոշության մեջ դու կապրես հերթական մեկ օրը, որ տրված է քեզ նախաստեղծ ճակատագրի ու հեշտանքի լուռ համաձայնությամբ: Եվ անկախ այն բանից, թե ինչպես կանցնի այդ օրը՝ սրտի ցավատանջ տենդի մեջ, թե հոգեպարար ու ջերմ զգացմունքների հորձանքում, գտիր մեկ ժամը այն 24-ից, որ կլանում է քո էությունը քուն թե արթմնի: Ընդամենը մեկ ժամ՝ մոռացության ու Ոչնչի կազդուրիչ գրկի մեջ, և դու կլինես երջանկագույնը շատ մահկանացուներից. դու կլինես ազատ մի թռչուն կապույտ անծիրի մեջ. դու մարդ կլինես: Ուրեմն ընտրի՛ր քո մեկ ժամը, սուզվի՛ր Անրջանքի և Մոռացության աշխարհը. հեռացի՛ր, փախու՛ստ տուր գաղջ ու ջլատիչ իրականությունից. նաև Ջեշտանքի գայթակղիչ խաբկանքից. տարալուծվի՛ր, անէացի՛ր:

Հավատա՛ և կլսես ինձ, հավատա՛ և կտեսնես ինձ: Ես անպայման կգամ և կբուժեմ քեզ ոչ խաբուսիկ դեղերով ու սին խոստումներով. այլ ինձնով. իմ ձայնով, իմ արյամբ: Հավատա՛ և կլսես ինձ. հավատա՛ և կտեսնես ինձ. Ես անպայման կգամ ու կասեմ քեզ. այդ ես եմ՝ Ոչինչը, և կդարմանեմ քո ցավերը ո՛չ խաբուսիկ դեղերով ու սին խոստումներով, այլ ինձնով, իմ ձայնով, իմ արյամբ: Հավատա՛ և լսիր իմ ձայնը:

– Քո ցավը ես եմ, – սա քեզ ասում է Ոչինչը:

– Ես կամ և չկամ, – սա քեզ ասում է Ոչինչը:

Ընտրի՛ր քո ժամը այս 24-ից, որ տրված է քեզ նախաստեղծ ճակատագրի և Ջեշտանքի լուռ համաձայնեցմամբ: Իսկ եթե չես ուզում, եթե չես կարող, ես կասեմ քեզ նաև այլ բաներ, որոնք թեև տհաճ են, քստմնելի, բայց կան ու նույնիսկ շոշափելի և պինդ են նրանք: Որոշողը դու ես, ընտրողը դու ես: Ես՝ քո հլու կամակատարը. ես Ոչինչն եմ. և՛ կամ, և՛ չկամ: Միայն դու և ուրիշ ոչ ոք. ուրեմն ընտրի՛ր քո ժամը ու արտասանիր բառեր հավատի և համաձայնության: Քեզ տրված է այս շանսը միայն մեկ անգամ, և մի՛ խարքափիր անորոշ կիսամութի ու կասկածանքների մեջ, հավատա՛ և վստահի՛ր:

Ես գիտեմ՝ դու ընկճված ես ու հիվանդ, բայց միայն ես և ուրիշ ոչ ոք: Ուրեմն մի՛ փորձիր թաքցնել հիվանդությունդ, մի՛ կեղեքիր հոգիդ տվայտագին միայնությամբ, դա խորացնում է վիշտդ, փշրում դեմքիդ լույսը: Ես հավատում եմ, դու կխոստովանես, կպատմես քո բոլոր ցավերը. դա ամոթալի չէ, դա հանցանք չէ:

Ընտրի՛ր քո մեկ ժամը, սուզվի՛ր Անրջանքի ու Մոռացության աշխարհը և կլսես իմ ձայնը:

– Դու փորձում ես խուսանավել, դու տառապում ես մեՆ-մեՆակ, սակայն դա քեզ չի հաջողվի, դու խաբում ես ինքդ քեզ, բայց ոչ նրան, որ քո մեջ է և ուժեղ է քեզնից այնքան ժամանակ, քանի դեռ մեՆակ ես նրա դեմ: Քեզ պետք է ընկեր: Ընտրի՛ր քո մեկ ժամը և կտեսնես ինձ:

Անկեղծորեն խոստովանի՛ր, հանկարծ չսխալվե՛մ ախտորոշման ու դեղաչափի մեջ: Կխոսես համր լեզվով, ձեռքերով, աչքերով, մարմնիդ բոլոր մասերով, դա ամոթալի չէ, դա հանցանք չէ: Քո վարմունքը իմ մեջ գուցե առաջացնի իրարամերժ ու երկդիմի զգացումներ. ես կարող եմ քեզ տալ հապճեպ բնորոշում, իսկ դու կշարունակես խոսել համր լեզվով, մարմնիդ բոլոր մասերով: Ոչ մի ձայն, ոչ մի շշուկ, միայն ու միայն նշմարներով:

Վստահի՛ր և ասա՛, միայն ինձ, ուրիշ ոչ ոքի: Մերկանդամ կանգնի՛ր սենյակի մեջտեղում, խոսի՛ր համր լեզվով, ցու՛յց տուր քո ցավը, և ես անպայման կգամ ու կդարմանեմ, կբուժեմ քեզ ո՛չ խաբուսիկ դեղերով ու սին խոստումներով, այլ ինձնով, իմ ձայնով, իմ արյամբ.

– Քո ցավը ես եմ, – սա քեզ ասում է Ոչինչը:

– Ես կամ և չկամ, – սա քեզ ասում է Ոչինչը:

Ընտրի՛ր քո ժամը, ընտրի՛ր քո ժամը, – և ես անպայման կգամ: